Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-118-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **09.09.2025թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ԺՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի ժ/պ Ավետիք Բեգոյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-118-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից 22 117 900 (քսաներկու միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 55 797 900 (հիսունհինգ միլիոն յոթ հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-118-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Պատվիրատու՝

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան
ք. Երևան , Գ.Նժդեհի 23
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900021000188
Հեռ.՝ (010) 494-803 (100)

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և
փոստային պրոդուկտների վարչության
ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավարի ժ/պ

Ավետիք Բեգոյան ----------
/ստորագրություն/